ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 25.05.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ԱՄ-2018/53

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 11.05.2018թ. թիվ 03/26-3/8471-18 գրությամբ «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Սևան» Ազգային Պարկ» ՊՈԱԿ-ի 05.05.2018թ. թիվ 25-319 և 10.05.2018թ. թիվ 25-373 գրությունների հիման վրա, 11.05.2018թ. թիվ 03/26-3/8471-18 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին, խնդրելով նախաձեռնել «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 14.05.2018թ. գրությամբ հայտնել է, որ «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կարիքների համար առողջության ապահովագրության ծառայության ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՍԱՊ-ԳՀԾՁԲ-18/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

«ՍԱՊ-ԳՀԾՁԲ-18/01» ծածկագրով ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ն, «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ն, «Ինգո Արմենիա» ԱՓԲԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպություն) և «Սիլ Ինշուրանս» ԱՓԲԸ-ն:

06.04.2018թ.-ին ժամը 16:40-ին հրապարակվել է պայմանագրի կնքման վերաբերյալ հայտարարությունը, որում նշված է, որ Ընկերության կողմից ներկայացվել է նվազագույն առաջարկ և գնահատման հանձնաժողովն ընտրել է հաղթող մասնակցին՝ ներկայացված պահանջներին համապատասխանող գնային նվազագույն առաջարկ ներկայացնելու փաստի ուժով: Անգործության ժամկետ է սահմանվել 5 օրացույցային օրը:

Պայմանագրի՝ ստորագրման ենթակա օրինակն Ընկերությանն է ուղարկվել 07.04.2018թ., որից հետո՝ 09.04.2018թ. ուղարկել է Պայմանագրի փոփոխված, իսկ 12.04.2018թ. Պատվիրատուն Ընկերությանն է ուղարկել Պայմանագրի վերջնական տարբերակը (հիմք՝ քաղվածք էլ. նամակագրությունից):

Ընկերությունը, լինելով բարեխիղճ մոլորության մեջ, թե որ օրվանից է սկսում հաշվարկվել տասն աշխատանքային օրվա ժամկետը, պարբերաբար փորձ է կատարել պայմանագիրն առաքել Պատվիրատուին, սակայն ճանապարհների անանցանելի վիճակի պատճառով դա կատարելն անհնար է եղել: Համարելով պայմանագրի վերջնական տարբերակի ստացման օրը 10 աշխատանքային օրվա ժամկետի մեկնարկի օր, և այդ փաստի հաստատումն ստանալով էլեկտրոնային նամակով Պատվիրատուից, Ընկերությունը պատշաճ կերպով ստորագրված և կնքված պայմանագիրն էլեկտրոնային տարբերակով 27.04.2018թ. ուղարկել է Պատվիրատուին, իսկ 03.05.2018թ. չնայած ստեղծված ներքաղաքական վերջին զարգացումների հետևանքով փողոցների անանցանելիությանը՝ Սևան քաղաքում հանձնել է պատվիրատուին, որը սակայն չի

ընդունվել վերջինիս կողմից: Ստացվում է, որ Ընկերությունը Պայմանագրի՝ կնքման ենթակա տարբերակը ամբողջ փոփոխություններով համալրված վիճակում ստացել է միայն 12.04.2018թ., ինչն էլ նշանակում է, որ Պայմանագրի կնքման համար Օրենքով սահմանված 10 աշխատանքային օրվա ժամկետն սկսել է հոսել հենց վերջին պայմանագիրը ստանալու օրվա հաջորդ օրվանից: Նույնիսկ եթե մի պահ ենթադրել, որ ժամկետը պետք է հոսեր 07.04.2018թ. առաջին պայմանագրի տարբերակը ստանալու օրվա հաջորդող օրվանից, միևնույնն է Պայմանագրի ստորագրված տարբերակի ներկայացման վերջնաժամկետը համընկնում է երկրում ֆորս-մաժորային իրավիճակի ժամանակահատվածի հետ՝ մի դեպքում 23.04.2018թ., մյուսում՝ 27.04.2018թ:

Հանձնաժողովի 05.05.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրության 1.1. կետի համաձայն՝ Ընկերությունը զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից, քանի որ Ընկերությունը պայմանագիրը կնքելու ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրել պայմանագիրը և չի ներկայացրել պայմանագրի ապահովումը:

Արձանագրության 2.1.1 կետով Հանձնաժողովը որոշում է կայացրել Ընկերության տվյալները՝ Օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ մասի բ ենթակետով սահմանված հիմքերով ուղարկել լիազորված մարմին:

Արձանագրության 2.1.3. կետի համաձայն որոշում է կայացվել էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցել հաջորդ տեղը զբաղեցրած Կազմակերպությանը, առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ «ՍԱՊ-ԳՀԾՁԲ-18/01» ծածկագրով հրավերի 2-րդ և 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը:

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Սևան» Ազգային Պարկ» ՊՈԱԿ-ի 05.05.2018թ. թիվ 25-319 և 10.05.2018թ. թիվ 25-373 գրությունների հիման վրա, 11.05.2018թ. թիվ 03/26-3/8471-18 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Ընկերությունը գտնում է, որ «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկում ներառելու համար առկա չեն բավարար իրավական և փաստական հանգամանքներ, մասնավորապես.

Օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ «2. Պայմանագիր կնքելու մասին որոշումը պարունակում է ամփոփ տեղեկատվություն հայտերի գնահատման և ընտրված մասնակցի ընտրությունը հիմնավորող պատճառների մասին ու հայտարարություն անգործության ժամկետի վերաբերյալ: Անգործության ժամկետը պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվա և պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրվա միջև ընկած ժամանակահատվածն է: 3. Մրցույթի և էլեկտրոնային աճուրդի դեպքում անգործության ժամկետը առնվազն 10 օրացուցային օր է: Գնման այլ ընթացակարգերի համար անգործության ժամկետն առնվազն հինգ օրացուցային օր է»:

Օրենքի 36-րդ հոդվածի համաձայն՝ «Սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: Ընդ որում, պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը: Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից»:

Օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածների՝ առանձնացված մասերի համադրական վերլուծությունից ուղղակիորեն բխում է, որ անգործության ժամկետի ավարտից հետո Պատվիրատուն պետք է Ընկերությանն ուղարկեր պայմանագիրը կնքելու ծանուցում և պայմանագրի նախագիծ: Հարկ է նկատել, որ պայմանագիրը կնքելու ծանուցում Ընկերությանը չի ուղարկվել, այլ ուղարկվել է միայն պայմանագրի նախագիծ: Նշված Նախագիծն ստանալուց հետո 10 աշխատանքային օր հետո ստորագրված և հաստատված էլեկտրոնային տարբերակով ուղարկում է պայմանագիրը Պատվիրատուին՝

27.04.2018թ.-ին: Ընդ որում՝ համաձայն էլեկտրոնային նամակագրության՝ Պատվիրատուն ընդունել է, որ 27.04.2018թ.-ը հանդիսանում է պայմանագրի ներկայացման վերջնաժամկետ (վերջին օր):

13.04.2018թ.-ից տասն աշխատանքային օրը լրանում է 27.04.2018թ.-ին:

27.04.2018թ.-ին Ընկերության համապատասխան աշխատակիցը ստորագրված պայմանագիրն ուղարկել է Պատվիրատուին (հիմք՝ քաղվածք էլ. նամակագրությունից), իսկ 03.05.2018թ.-ին՝ 27.04.2018թ.-ին հաջորդող առաջին աշխատանքային օրը՝ առաքել է այն ք. Սևան, սակայն չի ընդունվել Պատվիրատուի կողմից:

Ստացվում է, որ Ընկերության կողմից Օրենքով սահմանված ժամկետների պահպանմամբ կատարվել են բոլոր անհրաժեշտ գործողությունները՝ ուղղված պայմանագրի կնքմանը, սակայն բոլոր այդ գործողությունները մերժվել են Պատվիրատուի կողմից:

17.04.2018թ.-ից 02.05.2018թ. երկրում ստեղծված ներքաղաքական պայքարի արդյունքում փակված փողոցների պատճառով Ընկերությունը (հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Վ. Սարգսյան 10, Հանրապետության հրապարակ) հայտնվել է փաստացի փողոցների անանցանելիության և շրջափակման մեջ, որի հետևանքով չի կարողացել նույն օրը Պատվիրատուին ներկայացնել պայմանագրի թղթային կրիչով տարբերակը: Չնայած այդ հանգամանքին, Ընկերությունը գործադրել է իր լավագույն ջանքը ստեղծված անհաղթահարելի ուժի ազդեցության պարագայում պայմանագրի կնքմանն ուղղված բոլոր գործողությունները ձեռնարկելու և նախաձեռնելու համար:

Բացի այդ, Ընկերության համար անհասկանալի է, թե ինչու Պատվիրատուն չի ընդունել, պատշաճ ներկայացված չի համարել Պայմանագրի էլեկտրոնային կրիչով տարբերակը՝ նույնիսկ ստորագրության առկայությամբ:

Կարգով սահմանվում է, որ ստորագրված պայմանագիրը սահմանված ժամկետում ներկայացվում է գրավոր: Այսինքն, եթե Պատվիրատուի կողմից Ընկերության ներկայացրած պայմանագիրը չի ընդունվում, ապա դրա համար պետք է լինեն օրենքով սահմանված համապատասխան հիմքեր.

ա.Պայմանագիրը պետք է լինի ստորագրված,

բ.Պայմանագիրը պետք է ստորագրված լինի սահմանված ժամկետում,

գ.Պայմանագիրը պետք է լինի գրավոր (ոչ բանավոր):

Այսպես՝

ա.Ընկերության կողմից ներկայացվել է ստորագրված պայմանագիր,

բ.Պայմանագիրը ներկայացվել է սահմանված ժամկետում՝ 27.04.2018թ.-ին (այս փաստն ուղղակիորեն ընդունվում է նաև Պատվիրատուի կողմից, քանի որ վերջինս իր պաշտոնական էլեկտրոնային նամակագրությամբ նշում է, որ 27.04.2018թ.-ը հանդիսանում է պայմանագրի կնքման վերջնաժամկետ),

գ.Պայմանագիրը ներկայացվել է գրավոր, քանի որ այլ հավասար պայմաններում, եթե էլեկտրոնային կրիչի վրա առկա գրավոր ստորագրված փաստաթուղթը գրավոր չէ, ապա արդյո՞ք այն կարող է համարվել բանավոր փաստաթուղթ:

Մյուս կողմից Ընկերությունը հարկ է համարում անպայմանորեն անդրադառնալ բոլոր այն խոչընդոտներին, որոնք առաջացել են «անհաղթահարելի ուժի» ազդեցության պատճառով: ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի համաձայն անհաղթահարելի ուժը պետք է լինի՝ անկանխատեսելի և անկանխելի:

Տվյալ պարագայում փողոցների տոտալ շրջափակումները, որոնք ծավալվել են 17.04.2018թ-ից 02.05.2018թ.-ը հանդիսանում են անկանխելի և անկանխատեսելի խոչընդոտ, ուստի կարող են տվյալ իրավիճակում գնահատվել որպես անհաղթահարելի ուժ (ֆորս մաժորային իրավիճակ), որի առկայության պարագայում այս կամ այն պարտավորության չկատարումը (տվյալ դեպքում՝ պայմանագրի թղթային կրիչի տարբերակը Պատվիրատուին սահմանված ժամկետում չներկայացնելը) կարող է համարվել հարգելի, քանի որ Ընկերությունն իրապես զրկված է եղել Պայմանագիրը սահմանված ժամկետում ներկայացնելու իրական հնարավորությունից: Հատկանշական է, որ Պայմանագիրը Պատվիրատուի կողմից ստանալու ցանկացած ամսաթվից 10 աշխատանքային օրը հաշվարկելիս միևնույնն է Պայմանագրի ստորագրված տարբերակի ներկայացման վերջնաժամկետը համընկնում է երկրում ֆորս մաժորային իրավիճակի ժամանակահատվածի հետ՝ մի դեպքում 23.04.2018թ., մյուսում՝ 27.04.2018թ.:

Մեկ այլ կարևորագույն նկատառում.

Օրենքի 6-րդ հոդվածը, որին հղում կատարելով Պատվիրատուն ցանկանում է Ընկերությանը զրկել պայմանագիրը ստորագրելու իրավունքից, սահմանում է, որ.

«Բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ 6) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝ ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց»:

Տվյալ դեմքում անհրաժեշտ է վերլուծության ենթարկել մասնավորապես Օրենքի վերը նշված հոդվածի «բ» ենթակետով սահմանված «պայամանագիրը կնքելուց հրաժարվել» բառակապակցությունը:

Այսպես՝ վերլուծելով նշված եզրույթը՝ պարզ է դառնում, որ տվյալ իրավիճակում, որպեսզի այս կամ այն անձը համարվի պայմանագիրը կնքելուց հրաժարվող, ամենայն հավանականությամբ պետք է տեղի ունենա երկու տեսակի գործողություն.

Պայմանագրի կնքումից հրաժարվելու ակտիվ գործողություն (գրավոր հրաժարում, պայմանագրի կնքմանը խոչընդոտում և այլն):

Պայմանագրի կնքումից խուսափելու, անգործություն դրսևորելու գործողություն:

Մինչդեռ Ընկերության կողմից կատարված և ոչ մի գործողություն չի կարող ընկնել նշված սահմանման տակ, քանի որ Ընկերության կողմից իրականացվել են բոլոր հնարավոր և իրական գործողությունները, որոնց՝ Պատվիրատուի կողմից պատշաճ ընդունվելու դեպքում, դրանք պետք է հանգեցնեին պայմանագրի կնքման: Ստացվում է, որ Ընկերության կողմից ձեռնարկված բոլոր միջոցները հանդիպել են Պատվիրատուի կողմից բացասական արձագանքի և տվյալ իրավիճակում ոչ թե Ընկերությունն է հրաժարվել Պայմանագիրը կնքելուց, այլ Պատվիրատուն:

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Տարիներով, ամիսներով կամ օրերով հաշվարկվող ժամկետների

ընթացքն սկսվում է այն օրացուցային տարվա, ամսվա, ամսաթվի կամ վրա հասած իրադարձությանը հաջորդ օրվանից, որով որոշված է դրա ժամկետի սկիզբը»:

Այսպես՝ 12.04.2018թ.-ին Ընկերության կողմից ստացվել է պայմանագրի նախագիծը: Նշված օրվանը հաջորդող օրվանից՝ 13.04.2018թ. սկսում է հոսել 10 աշխատանքային օրվա ժամկետը,որն ավարտվում է 27.04.2018թ.-ին:

24.04.2018թ. համաձայն «Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի՝ «Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օր՝ նշվում է ապրիլի 24-ին, ոչ աշխատանքային օր»: Հետևաբար 27.04.2018թ. լրանում է պայմանագրի ներկայացման 10 աշխատանքային օրվա ժամկետը: Նույն օրն Ընկերության կողմից Պատվիրատուին է ուղարկվել համապատասխան պայմանագիրը՝ կնքված և ստորագրված վիճակում:

Արձանագրության 1.1 կետի համաձայն՝ Ընկերությունը պայմանագրի նախագիծն ստանալուց 10 աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրել պայմանագիրը և չի ներկայացրել պայմանագրի ապահովումը: Պայմանագիրը ստորագրելու մասով արդեն իսկ նշվել են Ընկերության նկատառումները: Ինչ վերաբերում է Պայմանագրի ապահովում ներկայացնելուն, ապա սույն գործով առկա է այնպիսի իրավիճակ, երբ կնքվելիք Պայմանագրի 7.15-րդ կետի համաձայն սահմանված է, որ. «7.15 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է»: Այսինքն՝ տվյալ իրավիճակում Պայմանագրի ապահովման ներկայացումը պետք է հաջորդեր պայմանագրի կնքմանը և համապատասխան ֆինանսների առկայության պարագայում:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով հիշյալ իրավական հիմնավորումներով, Ընկերությունը գտնում է, որ առկա չեն Օրենքով սահմանված հիմքեր՝ Ընկերությանը Օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ ենթակետի «բ» կետով պայմանագիրը ստորագրելուց հրաժարված կողմ ճանաչելու և պայմանագիրն ստորագրելու իրավունքից զրկելու համար, քանի որ Ընկերությունը ոչ միայն երբևէ չի հրաժարվել պայմանագիրը կնքելուց և ձեռնարկել է բոլոր հնարավոր գործողությունները, որպեսզի պայմանագիրը կնքված համարվի նույնիսկ ֆորս-մաժորային իրավիճակներում, այլ նաև՝ պատրաստակամ է ցանկացած պահի վերսկսել Պայմանագրի կնքման գործընթացը՝ նույնիսկ Պատվիրատուի կողմից ցուցաբերած ոչ կառուցողական գործելաոճի:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/53 ընթացակարգի շրջանակներում 16.05.2018թ. ժամը 10:45-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. <u>«Սևան» Ազգային Պարկ» ՊՈԱԿ-ի փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Սևան» Ազգային Պարկ» ՊՈԱԿ-ը, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 05.05.2018թ. թիվ 25-319 գրությամբ հայտնել է, որ ՀՀ բնապահպանության նախարարության «Սևան» Ազգային Պարկ» ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպվել է «ՍԱՊ-ԳՀԾՁԲ-18/01» ծածկագրով գնման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ն, «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ն, «Ինգո Արմենիա» ԱՓԲԸ-ն և «Սիլ Ինշուրանս» ԱՓԲԸ-ն: 29.03.2018թ. հաղթող է ճանաչվել հայտ ներկայացրած, հրավերի պահանջներին բավարարող և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ն:

07.04.2018թ. «առողջության ապահովագրության ծառայության» ձեռքբերման պայմանագրի նախագիծը էլեկտրոնային փոստի միջոցով ուղարկվել է Ընկերությանը՝ առաջարկելով 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել պայմանագրի ստորագրված և կնքված 2 օրինակ և պայմանագրի ապահովում: Սահմանված ժամկետում «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ն չի ներկայացրել պահանջվող փաստաթղթերը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/53 ընթացակարգի շրջանակներում 16.05.2018թ. ժամը 10:45-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ԱՄ-2018/53 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՍՑ-ԱՄ-2018/53 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Սևան» Ազգային Պարկ» ՊՈԱԿ-ի կողմից «Սևան» Ազգային Պարկ» ՊՈԱԿ-ի կարիքների համար առողջության ապահովագրության ծառայության ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՍԱՊ-ԳՀԾՁԲ-18/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 05.04.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 3-րդ կետի 2.1-րդ ենթակետով կայացված որոշմամբ «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից և որոշվել է Ընկերությանը ներկայացնել առողջության ապահովագրության ծառայության մատուցման պայմանագրի կնքման առաջարկ:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 05.05.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 1.1. կետով արձանագրվել է, որ «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ն զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից, քանի որ Ընկերությունը պայմանագիրը կնքելու ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրել պայմանագիրը և չի ներկայացրել պայմանագրի ապահովումը:

4. Պատվիրատուն 07.04.2018թ. «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ին էլեկտրոնային եղանակով ուղարկել է պայմանագրի նախագիծն՝ առաջարկելով 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել պայմանագրի կնքված և ստորագրված 2 օրինակը և պայմանագրի ապահովումը: Նույն օրը՝ Պատվիրատուն էլեկտրոնային եղանակով

Ընկերությանն ուղարկել է պայմանագրի նախագծի շտկված տարբերակը, առաջարկելով հիմք ընդունել նշված տարբերակը: 12.04.2018թ. Պատվիրատուն էլեկտրոնային եղանակով Ընկերությանը կրկին ուղարկել է պայմանագրի նախագծի նոր տարբերակ:

5. «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ն 27.04.2018թ. էլեկտրանային եղանակով «Սևան» Ազգային Պարկ» ՊՈԱԿ-ին ուղարկել է պայմանագրի ստորագրված և կնքված տարբերակը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Միհեր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 11.05.2018թ. թիվ 03/26-3/8471-18 գրությունը, «Սևան» Ազգային Պարկ» ՊՈԱԿ-ի 05.05.2018թ. թիվ 25-319 և 10.05.2018թ. թիվ 25-373 գրությունները և կից փաստաթղթերը, «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ի համապատասխան գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի համաձայն՝

1. Պայմանագիր կնքվում է գնահատող հանձնաժողովի որոշման հիման վրա՝ պատվիրատուի կողմից:

2. Սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: Ընդ որում, պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը:

3. Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից: Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

4. Մինչև սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված ժամկետի ավարտը կողմերի համաձայնությամբ կարող են պայմանագրի նախագծում կատարվել փոփոխություններ, սակայն դրանք չեն կարող հանգեցնել գնման առարկայի բնութագրերի փոփոխմանը, ներառյալ՝ ընտրված մասնակցի առաջարկած գնի ավելացմանը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 32-րդ կետի 13-րդ և 14-րդ ենթակետերի համաձայն՝

13) ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Ապրանքների գնման դեպքում պայմանագրի նախագծում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը.

14) ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում:

«Սևան» Ազգային Պարկ» ՊՈԱԿ-ի կողմից «Սևան» Ազգային Պարկ» ՊՈԱԿ-ի կարիքների համար առողջության ապահովագրության ծառայության ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՍԱՊ-ԳՀԾՁԲ-18/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 05.04.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 3-րդ կետի 2.1-րդ ենթակետով կայացված որոշմամբ «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից և որոշվել է Ընկերությանը ներկայացնել առողջության ապահովագրության ծառայության մատուցման պայմանագրի կնքման առաջարկ:

Մասնավորապես՝ 07.04.2018թ. ժամը 11:13-ին «Սևան» Ազգային Պարկ» ՊՈԱԿ-ը էլեկտրոնային եղանակով ծանուցել է «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ին՝ ներկայացնելով պայմանագրի նախագիծը և առաջարկելով 10 աշխատանքային օրվա ընթացքում

ներկայացնել պայմանագրի կնքված և ստորագրված 2 օրինակ և պայմանագրի ապահովում:

Նույն օրը ժամը 14:26-ին Պատվիրատուն էլեկտրոնային եղանակով կրկին Ընկերությանն ուղարկել է պայմանագրի նախագիծ՝ նշելով, որ անհրաժեշտ է ստորագրել և կնքել պայմանագրի սույն օրինակը, քանի որ նախորդում վճարման ժամանակացույց չկա:

«Սևան» Ազգային Պարկ» ՊՈԱԿ-ը 12.04.2018թ. էլեկտրոնային եղանակով «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ին ուղարկել է պայմանագրի նախագծի նոր տարբերակ:

Ընկերությունը 27.04.2018թ. Պատվիրատուի էլեկտրոնային հասցեին ուղարկել է պայմանագրի ստորագրված և կնքված տարբերակը և պայմանագրի ապահովումը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 05.05.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 1.1. կետով արձանագրվել է, որ «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ն զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից, քանի որ Ընկերությունը պայմանագիրը կնքելու ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրել պայմանագիրը և չի ներկայացրել պայմանագրի ապահովումը:

Այսպիսով՝ ուսումնասիրելով գործում առկա փաստաթղթերը, ինչպես նաև կողմերի նամակագրությունն, արձանագրում եմ հետևյալը.

«Սևան» Ազգային Պարկ» ՊՈԱԿ-ը 07.04.2018թ. ժամը 11:13-ին էլեկտրոնային եղանակով «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ին ուղարկել է «ՍԱՊ-ԳՀԾՁԲ-18/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքներով կնքվելիք՝ առողջության ապահովագրության ծառայության մատուցման պայմանագրի նախագիծը՝ առաջարկելով 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել պայմանագրի կնքված և ստորագրված տարբերակը:

Միևնույն ժամանակ Պատվիրատուն նույն օրը ժամը 14:26-ին Ընկերությանն ուղարկել է պայմանագրի նախագծի փոփոխված տարբերակն՝ առաջարկելով ստորագրել և կնքել սույն տարբերակը:

Դրա հետ մեկտեղ Պատվիրատուն կրկին ***12.04.2018թ.*** «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ին ուղարկել է պայմանագրի փոփոխված մեկ այլ տարբերակ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ Օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում ***պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:***

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ***եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում,*** չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված ժամկետի ավարտը կողմերի համաձայնությամբ կարող են պայմանագրի նախագծում կատարվել փոփոխություններ:

Այսպես՝ «Սևան» Ազգային Պարկ» ՊՈԱԿ-ը պայմանագրի նախագծի վերջնական տարբերակը Ընկերությանն ուղարկել է ***12.04.2018թ.***: Ընկերությունը ***27.04.2018թ.*** Պատվիրատուին էլեկտրոնային եղանակով ուղարկել է պայմանագրի ստորագրված և կնքված տարբերակը:

Տվյալ դեպքում արձանագրում եմ, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված 10 աշխատանքային օրվա ժամկետը, որը համաձայն նույն հոդվածի հաշվարկվում է ընտրված մասնակցի կողմից պայմանագիր կնքելու ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո, «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ի դեպքում պետք է հաշվարկվի 12.04.2018թ. հետո, քանի որ Պատվիրատուն 12.04.2018թ. Ընկերությանը ներկայացրել է պայմանագրի նախագծի նոր տարբերակը:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ տարիներով, ամիսներով կամ օրերով հաշվարկվող ժամկետների ընթացքն սկսվում է այն օրացուցային տարվա, ամսվա, ամսաթվի կամ վրա հասած իրադարձությանը հաջորդ օրվանից, որով որոշված է դրա ժամկետի սկիզբը:

Տվյալ դեպքում տասն աշխատանքային օրվա հաշվարկն իրականացվում է Պատվիրատուի կողմից Ընկերությանը պայմանագրի նախագծի վերջնական օրինակն ուղարկելուն հաջորդող աշխատանքային օրվանից՝ 13.04.2018թ.: Դրա հետ մեկտեղ

«Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ ապրիլի 24-ին նշվում է Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օր, ոչ աշխատանքային օր, ուստի 12.04.2018 թվականից հաշված տասն աշխատանքային օրվա վերջնաժամկետը համարվում է 27.04.2018թ. ներառյալ:

Այսպիսով՝ «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ն 27.04.2018թ. էլեկտրոնային եղանակով «Սևան» Ազգային Պարկ» ՊՈԱԿ-ի համապատասխան էլեկտրոնային հասցեին է ուղարկել պայմանագրի ստորագրված և կնքված տարբերակը՝ հետագայում առաքելով նաև պայմանագրի թղթային տարբերակը: Հետևաբար արձանագրում եմ, որ Ընկերությունը չի խախտել Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված պահանջը:

Դրա հետ մեկտեղ Կարգի 32-րդ կետի 14-րդ ենթակետը սահմանում է, որ ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում:

«Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ն 27.04.2018թ. էլեկտրոնային եղանակով Պատվիրատուին ուղարկել է պայամանագրի ստորագրված և կնքված գրավոր տարբերակը: Ինչ վերաբերում է պայմանագրի թղթային տարբերակն առաքելուն, ապա ՀՀ գնումների հետ կապված անձը կարևոր է համարում ընդգծել նաև այն, որ քննարկվող ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետությունում սկիզբ առած և մեծ թափ ստացած խախաղ անհնազանդության ակցիաների հետևանքով արգելափակված էին Հայաստանի Հանրապետության մի շարք ճանապարհներ, այդ թվում նաև՝ Երևան քաղաքից մարզեր տանող, որի հետևանքով սահմանափակվել էր բնակչության տեղաշարժը: Դրա հետ մեկտեղ Ընկերությունն Օրենքով սահմանված ժամկետների պահպանմամբ՝ կատարել է պայմանագրի կնքմանն ուղղված անհրաժեշտ գործողությունները և ուղարկել է պայմանագրի ստորագրված և կնքված գրավոր տարբերակը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Ուսումնասիրելով «Սևան» Ազգային Պարկ» ՊՈԱԿ-ի 05.05.2018թ. թիվ 25-319 և 10.05.2018թ. թիվ 25-373 գրությունները և կից փաստաթղթերը, «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ի դիրքորոշում, ինչպես նաև այն համադրելով գործում առկա ապացույցների հետ, գտնում եմ, որ «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ն չի հրաժարվել «ՍԱՊ-ԳՀԾՁԲ-18/01» ծածկագրով պայմանագիրը կնքելուց և կատարել է համապատասխան գործողությունները, որոնք ուղղված էին պայմանագիրը կնքելուն:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 11.05.2018թ. թիվ 03/26-3/8471-18 գրությամբ «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 00031904) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**